

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 09.10.19թ. կայացած թիվ 3.19-20 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 25-ը:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Ֆիզիկայի ֆակուլտետի աշխատակիցներին պատվոգրերի և հուշամեդալների հանձնում:
2. Ֆիզիկայի ֆակուլտետի գործունեությունը համակարգող հանձնաժողովների ստեղծում:
3. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքին և «ֆիզիկա» առարկան որպես ընդունելության պարտադիր քննություն մտցնելու որոշման քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Տեղի ունեցավ ֆակուլտետի աշխատակիցներին պատվոգրերի և հուշամեդալների հանձնման արարողությունը:

Ելույթ ունեցավ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա նախ շնորհավորեց ԵՊՀ ոսկե և արծաթե մեդալներ ստացած գործընկերներին՝ օպտիկայի և տեսական ֆիզիկայի ամբիոնների վարիչներ Ռ. Ալավերդյանին և Ա. Սահարյանին, ինչպես նաև պինդ մարմնի ֆիզիկայի և ընդհանուր ֆիզիկայի և ասղաֆիզիկայի ամբիոնների աշխատակիցներ Լ. Գասպարյանին և Ժ. Խաչատրյանին: Այնուհետև բարեխիղճ աշխատանքի համար պատվոգրեր հանձնվեցին հետևյալ աշխատակիցներին՝

Պետիկ Պետրոսյանին, Վաղիմ Օհանյանին, Արթուր Կիրակոսյանին, Թամարա Մնացականյանին, Վալերի Առաքելյանին, Աննա Քոթանջյանին, Տիգրան Հակոբյանին, Աննա Ասատրյանին, Գոհար Հովհաննիսյանին, Կարինե Քարամյանին: ԵՊՀ 100-ամյակի կապակցությամբ հուշամեդալով պարգևատրվեցին Արամ Մանասեյանը և Իշխան Հարությունյանը: ԵՊՀ 100-ամյակի կապակցությամբ թողարկված նամականիշեր ստացան Մելիակ Հայրապետյանը, Շուշանիկ Գասպարյանը, Շուշանիկ Տոնոյանը:

Լսեցին՝ ֆիզիկայի ֆակուլտետի գործունեությունը համակարգող հանձնաժողովների ստեղծման հարցը: Ելույթ ունեցավ Ռ. Հակոբյանը, ով իր ելույթում նշեց ֆակուլտետում անհրաժշտություն կա ստեղծելու մի քանի հանձնաժողովներ, որոնք կհամակարգեն ֆակուլտետում ընթացող տարբեր գործառույթներ: Մասնավորապես, առաջարկեց ստեղծել աշխատակիցների վարկանիշավորման հանձնաժողով, որը կմշակի չափանիշներ՝ ըստ որի կորոշվեն աշխատակիցների վարկանիշերը: Հետագայում դա թույլ կտա աշխատակիցներին ներկայացնել այս կամ այն պարգևների: Հնչեցին առաջարկներ հանձնաժողովի անդամների ընտրության վերաբերյալ:

Որոշեցին ստեղծել ֆիզիկայի ֆակուլտետի աշխատակիցների վարկավորման հանձնաժողով: Քվեարկության արդյունքում միաձայն հաստատվեց հանձնաժողովի հետևյալ կազմը.

Իշխան Վարդանյան/Լուսինե Ալոյան

Գոհար Հովհաննիսյան

Աննա Ասատրյան

Արամ Սահարյան

Ատոմ Մուրադյան

Մարտին Գրիգորյան

Մինաս Սուքիասյան

Այնուհետև Ռ. Հակոբյանը առաջարկեց ստեղծել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի գիտխորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողով: Հակոբյանը առաջարկեց հանձնաժողովի նախագահ նշանակել Ռոլանդ Ավագյանին: Հնչեցին առաջարկներ հանձնաժողովի անդամների ընտրության վերաբերյալ:

Որոշեցին ստեղծել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի գիտխորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողով: Քվեարկության արդյունքում 1 դեմ, 24 կողմ ձայների մեծամասնությամբ հաստատվեց հանձնաժողովի հետևյալ կազմը.

Ռոլանդ Ավագյան (նախագահ)

Գայանե Ղազարյան

Համլետ Բաղայան

Հրայա Ասատրյան (ուսանող)

Այնուհետև Հակոբյանը առաջարկեց ստեղծել մի հանձնաժողով, որը կգրավի ֆակուլտետի արտաքին կապերի և այլ ռազմավարական ծրագրերի մշակմամբ: Քննարկումներ եղան հանձնաժողովի անդամների ընտրության շուրջ:

Որոշեցին ստեղծել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի արտաքին կապերի հանձնաժողով: Քվեարկության արդյունքում միաձայն հաստատվեց հանձնաժողովի հետևյալ կազմը.

Աշոտ Մելքոնյան

Ռաֆիկ Հակոբյան

Մաքսիմ Սարգսյան

Համլետ Բաղայան

Լսեցին «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի և «ֆիզիկա» առարկան որպես ընդունելության պարտադիր քննություն մտցնելու հարցը:

Գիտխորհրդի անդամները կարծիք հայտեցին, որ խիստ կարևոր է բարձրացնել ֆիզիկայի դերը կրթական համակարգում և առհասարակ հասարակության մոտ, քանի որ դա մեծապես կնպաստի երկրի տնտեսական զարգացմանը: Խոսվեց նաև այն մասին, որ նպատակահարմար է ընդունելության պարտադիր քննությունները նույնը լինեն ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, մաթեմատիկայի և մեխանիկայի, կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետներում, ինչպես նաև ճարտարագիտական համալսարանում: Քննարկումների արդյունքում ֆիզիկայի ֆակուլտետի միասնական կարծիքը վերը նշված օրենքի վերաբերյալ ձևակերպելու համար 2 դեմ, 3 ձեռնպահ և 20 կողմ ձայների մեծամասնությամբ ստեղծվեց խմբագրական հանձնաժողով հետևյալ կազմով՝ Աշոտ Մելքոնյան, Ալեքսանդր Հայրապետյան, Արշակ Վարդանյան, Մարտին Գրիգորյան: Բոլոր առաջարկները կուղարկվեն հանձնաժողովի անդամներին՝ գրավոր տեսքով:

Ընթացիկ հարցերում **լսեցին** Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի
ասիստենտ, ֆ.մ.գ.թ. Մեխակ Հայրապետյանին դոցենտի կոչման ներկայացնելու հարցը:
Ելույթ ունեցավ ֆիզիկայի ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Կիրակոսյանը, նա նշեց, որ Մեխակ Վազգենի Հայրապետյանը ակտիվորեն
գրադվում է գիտական հետազոտություններով, հեղինակ է 40 գիտական հոդվածների,
որոնցից 12-ը վերջին 5 տարների ընթացքում: Մ.Վ. Հայրապետյանը համահեղինակ է 2
ուսումնական ձեռնարկի, ակտիվորեն ներգրավված է ուսումնական գործընթացում:
Նա ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու է 2004 թ.-ից:

Հիմք ընդունել մրցութային հանձնաժողովի եզրակացությունը Մեխակ Վ.
Հայրապետյանի գիտամանկավարժական գործունեության մասին քվեարկության
արդյունքում միաձայն **որոշեցին**՝ Երաշխավորել ընդհանուր ֆիզիկայի և
աստղաֆիզիկայի ամբիոնի ասիստենտ Մեխակ Վազգենի Հայրապետյանին դոցենտի
կոչման ներկայացնելու համար:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Շ.Ա. Տոնոյան